ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/40 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

25 հունիսի 2019թ.
ժամը 12.00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու**

Արմեն Գևորգյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ.

**Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ**

Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

**Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ**

Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.

Վարդգես Դադոյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին**

**1.1** Փոխանցման տուփի յուղի ձեռքբերման նպատակով ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/40 ծածկագրով ընթացակարգի հրավերը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ս.թ. հունիսի 13-ին հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում՝ www.armeps.am կայքում և գնումների պաշտոնական տեղեկագրում:

**1.2** Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են էլեկտրոնային եղանակով 20.06.2019թ., ժամը 12.00-ին:

**1.3** ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/40 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող ծառայության նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված:

**1.4 Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | Հասցեն, էլ. փոստը |
|---|---|---|
| 1 | «ԱԼԻՈՆ» ՍՊԸ | lyova1985@mail.ru |
| 2 | «Ժակ և Գոռ» ՍՊԸ | Հրազդան, Կենտրոն թաղ. 19 40, saturn90@mail.ru |
| 3 | «Մոսէսքո» ՍՊԸ | Արփաշատ, Խանջյան 17 43, mosesco@rambler.ru |
| 4 | «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ | Երևան Նոր Նորքի 8մ/շ 30-43, info@autofan.am |

**2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան,

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

2.3 «ԱԼԻՈՆ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է ՌԴ ռեզիդենտ, փաստաթղթերի ներկայացված են ստորագրված, կնքված տարբերակով, բացառությամբ Հավելված 2.1-ի. ներկայացված է առանց հաստատման: Նիստը կասեցվել է, մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

### 3. Նախահաշվային գները, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.

ՀՀ դրամ

| Հ/հ | գնման առարկայի անվանումը | մասնակիցներ | նախահաշվային գին | գնային առաջարկները | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհ. գինը |
| 1 | Փոխանցման տուփի յուղ TM-5 85W-90 | «Ժակ և Գոռ» ՍՊԸ | 960 000 | 644 500 | 128 900 | 773 400 |
| | | «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ | | 716 500 | 143 300 | 859 800 |
| | | «Մոսէսքո» ՍՊԸ | | 860 000 | 172 000 | 1 032 000 |
| | | «ԱԼԻՈՆ» ՍՊԸ | | 3 316 680 | - | 3 316 680 |

3.1 «ԱԼԻՈՆ» ՍՊԸ գնային առաջարկը ներկայացված է արտարժույթով (444 000 ՌԴ ռուբլի), գնային առաջարկները համեմատվել են հայտերի բացման նիստի օրվա դրությամբ (20.06.2019թ.) ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով (7,47 ՀՀ դրամ):

***4. Հանձնաժողովը որոշեց.***

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից.

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիր/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.4 ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/40 ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

**Հանձնաժողովի**

նախագահ՝ ________ Ա. Գևորգյան

անդամներ՝ ________ Գ. Բոյաջյան

________ Ա. Մկոյան

________ Վ. Դադոյան

________ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ ________ Ա. Գալուստյան